ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ
Ի ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿՍ ՀԱՅՈՑ
ՅԱՄԻ 1871

Մեր ծանօթ ուղեւորն Ռատտէ[1] Նոր գրութեամբ կ'իմացընէ որ իր փափագած հանգիստը չգտաւ յԵրեւան, (ուր որ Թողեր էինք զինքը), պատճառաւ օդոց տաքութեան, որ ամառը գրեթէ անտանելի կ'ընեն քաղքին բնակութիւնը, և ցորեկը տնէն դուրս ելնել չըլլար. մինչդեռ առաւօտուն Արարատայ և Արագածու սառնապատ գագաթունքն պայծառ կը փայլին՝ կէսօր չեղած գետնին տաքութենէն ճառագայթած գոլերով կը ծածկուին. յիրաւի երեկոյեան դէմ նորէն կը սկսին պայծառանալ և Արագածու զովարար հովերն կու գան, բայց անանկ ալ ուժով կը փչեն՝ որ գետնի փոշին ալ քշելով՝ շնչառութեան արգելք կ'ըլլան. կը մնայ գիշերուան և քնոյ հանգիստն. սակայն զայն ալ կ'ընդհատեն, կ'արգիլեն մժեղք և մոծակք։ Այս բաներէն ոչ միայն նեղուած՝ այլ և հիւանդութեան մը սկիզբն առած, կ'ըսէ ուղեւորն, շատ չուշացան յԵրեւան, այլ 'ի 25[2] յուլիսի նորէն ելան 'ի ճանապարհ դէպ յԱրագած լեռն ելնել որ Երեւանայ արեւմտեան հիւսիսային կողմն է։ Անցնելով Զէնկի (Հրազդան) գետոյն կամրրջէն՝ մտան 'ի դաշտագետինն՝ որ պազալտեան քարուտ է. բայց ուր որ գետն քիչ մը յարմար տեղ բացած է՝ 'ի պարտէզ փոխուած է կամ 'ի ջըրաղացս. այնպէս որ 'ի սկզբան գրեթէ միշտ կաղամախեաց, ընկուզենեաց, արքակաղնեաց և պտղալից ծիրանի ծառոց շուքին մէջ կը քալէին. ճամբան ալ բաւական լայն է, այլ ոչ մաքուր և կոկ։ Այս բարգաւաճ բուսաբերութիւնն, անոր մէջ թռչըտող միջատներն՝ զոր կը զննէին, և երբեմն երբեմն ծառոց ճիւղերուն միջէն երեւցած Արագածայ ձիւնախառն գագաթունք՝ տեսարանը հաճոյ և ուղեւորութիւնը զուարճալի կ'ընէին։ Բայց երբ պարտիզաց ծայրը հասան՝ տեսարանն ալ այլափոխեցաւ. լերկ, չոր և քարուտ անապատ մը բացուեցաւ, նեղ և տապագին ճամբով. միայն կապպարի բոյսեր կ'երեւէին տեղ տեղ, որոց միջէն ցախսարեկիկք կը փախչըտէին։ Ձմեռը հօն կու գան նաև այն տեսակ թռչուններ՝ զոր մեր Ե դարու մատենագիրն Ղազար Փարպեցի կոչէ «Կրկջաձայն քաղցրաձայն առապարասէր վիմասոյզ սորամուտ երամս կաքաւուց և Սալամբաց». որոյ յարմարի և գերմաներէն անուն թռչնոյն զոր ուղեւորն յիշէ, Steinhühner, և կրնար թարգմանուիլ առապարի-հաւ կամ աքլոր. այս եղանակիս երկրին աւելի բարձր կողմերը կը կենային հաւերն։

Հրազդանայ գետահովիտը կը բաժնեն յԱպարանայ Իւչ-թէփէլէր կոչուած ցած լերինք, (զորս պէտք չէ շփոթել համանուն և աւելի բարձր հրաբղխի լերանց հետ, որք մօտ են Գեղամայ լճին). ասոնց հիւսիսակողմը և ընդ մէջ Արագածու՝ կանգնի Արայի լեառն, որ ռամկօրէն Գառնը-եարըղ կոչուի։ Ապարան գետն ալ 'ի նախնեաց մերոց կոչէր Քասաղ. գետոյն անցքն է քարաշէն կամուրջով յԱշտարակ մեծ գիւղ Հայոց յաջակողմն կամ յարեւմտակողմն, իբրեւ 'ի 4000' բարձրութեան, զուարճալի դիրք և բարգաւաճ պարտիզօք և այգեօք։ Քիչ մ'ալ դէպ յարեւմտեան հիւսիս երթալով՝ կը սկըսին Արագածայ լայն ստորոտքն, և անկէ իջած մանր առուակք և ձորակք. լեռան միջակողմը կ'երեւին թուփք։ Կէսօրուան մօտ հասան ուղեւորք 'ի Փիրօքան գիւղ, 4800'[1] բարձր յերեսաց ծովու. և ընդունելութիւն գտան յոստիկանէ վիճակին Էջմիածնի, որ ամառը հօս կը կենայ։ Հունձք շատ լաւ էին՝ ուր որ ոռոգուած էր գետինն, իսկ ուր ջրի պակսութիւն կար՝ արեւու ալ տօթ և խանձրած գետին. Թթենիք ալ աղէկ մշակուած էին, և նաև շերամադարմանութիւն սկսուած էր։ Վրանի տակ անցընելով գիշերը՝ երկրորդ առաւօտուն (27 յուլ.) նոր ընկերներով ճամբայ ելան, և քանի մը ժամէն հասան 'ի Քեաթաքըլը պըզտիկ գիւղ, (5700'). հօս կը սպասէր իրենց Դաւիթ Շահառովիչ Եզիազարով (Յօր. Jediasarow) ծերուկ Հայն, որ 1829ի Պարսկական Հայաստանի գաղթականներէն էր, այն ատեն իբր 15ամեայ պատանի մը, և յետ շատ դիպուածներէ անցնելու՝ հիմա ամառը հօս կ'անցընէր պարտէզ մը մշակելով, ձմեռն ալ յԵրեւան կամ ուրիշ տեղ. Թէ պարտիզպանն և թէ պարտէզն շատ հաճոյ եղան մեր ուղեւորաց. այն կողմերը ասկէ բարձր տեղ և ասկէ աղէկ մշակուած պարտէզ չկար, որով և ոչ յարմարագոյն տեղ մը մշակութիւն սովրելու, այնպիսի մշակութիւն՝ որ 'ի հարկէ երկրին դրից համեմատ պիտի տարբերի սովորական կեր-

1 Տես երես 7։
2 Ըստ նոր տոմարի։

1 Ոտնաչափքս են Ռուսաց կամ Անգղիացւոց չափով, փոքր քան զՓռանկացն կամ Բարիզու։

պէն։ Քարկյո-տէրէսի (Kargö) կոչուած ձորախորին ձախ եզերքը հարթելով՝ լաւաքարուտ հրաբղխի գետնին վրայ բուսաբեր հող կրեր էր Դաւիթ, և իբր 600 քառակուսի ձողաչափ տեղ պատրաստեր, ու զանազան ածուներ բաժնելով՝ պտղատու և անպտուղ ծառեր տնկեր էր, հանդերձ ընդեղինօք և խաւարտօք, յորս կային և ծնեբեկ և զարդի բոյսեր։ Խորաձորին հիւսիսային եզերքն ալ ուռենիներ և ակասիաներ տնկած էր, որոց մէջն ալ արևելեան ոճով տափակ տանեօք կրկնայարկ տնակ մը, յորոյ վերնայարկին վրայ նախաճաշ մը հրամցուց Դաւիթ իր պարտիզի բերքերովը և կաթնեղինօք, զոր չկրցան լիով վայելել ուղևորք՝ իրենց տկարութեան պատճառաւ։ Կը ցաւի Ռատտէ որ չկըրցաւ հոս օդաբանական քննութիւններ ընել, միայն համոզուած է թէ Արագածու ցուրտ հովերէն պաշտպանուած պիտի ըլլայ տեղն՝ ուր մատղաշ բոյսեր և թուփեր ալ կային։

Կէսօրէն վերջը ելնելով Շահառովչի պարտիզէն՝ սկսան դէպ 'ի վեր երթալ, և նախ ցած կաղնի ծառոց մէջ մտան, որք 'ի սկզբան ցանցառ էին, բայց 'ի 6500' բարձրութեան քիչ մը խտացան, և հազիւ 25 կամ 30' բարձրութիւն ունին. միջոցները այլ և այլ բոյսերէ զատ՝ ատենօք պտղատու ծառոց հին կոճղեր ալ կային. կաղնեաց սահմանն ինչուան յ' 7200' բարձրութեան կը հասնի յԱրագած. անկէ անդին իբր 1000' բարձրութեան վրայ ալ գտուին քանի մը թուփք և կարճ գիհի ծառք, նաև վայրենի վարդք (յ' 8200' բարձրութեան)։ Անկէ վեր խոտեղէն բուսոց սահմանն է, բայց շատ ցանցառ են բոյսք. եղածն ալ Քրդաց հօտք կը ճարակէին, ինչպէս աչօք տեսան մեր ուղևորք յ' 8713' բարձրութեան, Օղուզլար (Ochoslar) կոչուած տեղ մը, զոր Հսկայից գերեզման ասեն, վասն զի մեծամեծ տափակ քարեր կան, շատն հորիզոնական դրիւք շարած, որոց ներքև հսկայներ թաղուած են կ'ըսեն Քուրդք։ Այս յայտնի է որ մարդիկ հոս բերած են այս 5 1/2 մեդր երկայն և ոտնաչափ մը թանձր տաշած որձաքարերը, թէպէտ ոչ բոլորովին ողորկ, այլ չորս դին կանոնաւոր կտրած և երկու ծայրերն քիչ մը բարակ և տափակ։ Ասոնց մէկ հատն ուզեցին փորել ուղևորքն, և երկու կանգուն (արշին) պեղելով բան չգտան, բայց մաքուր կաւ կամ տղմուտ հող, սակայն Ռատտէ կը յուսայ որ եթէ բաւական ժամանակ աշխատի մէկն՝ անօգուտ չըլլայ։ Այս տեղէն 200 ոտք վար Անբերդու վտակին ցամքած եզերքը վրանի տակ անցուցին գիշերը ուղևորքն։

Երկրորդ առաւօտուն (28 յուլ.) կանուխ ելան որ Գարա-կէօլ ըսուած լիճը հասնին. ինչուան 9000' բարձրութեան մարգագետին կար, և մէջը պզտիկ ճերմակ ծաղկով առատ, հովանաձև դեղին անկոթ ծաղիկ մը գետնամած տերևօք (Chamaesciadium flavescens)։ Երեք կլորաձև լերանց քամակներէ անցնելով՝ հասան Արքաշան-տէրէսի կոչուած խորաձորը, իբր 'ի 10000' բարձրութեան. ուր կ'երևար ջրանցք մը՝ Գարա-կէօլի ձիւնահալ ջուրը յԵրասխայ դաշտը իջեցնելու համար, զոր կ'արժէր նորոգել։ Հոս ալ Քրդաց թանձրադմակ ոչխարներն կ'արածէին 'ի մէջ գեղեցիկ գարնային խաչաձև ծաղկանց և անուշահոտ արաբկաց (Arabis albida)։ Քարաբլրէ մ'անցնելով՝ մտան 'ի բարձրաւանդակն Գարա-կէօլի, 11500' բարձր, Արագածու հարաւային-արևելեան ստորոտը, ուսկից յերևան ելաւ այն կողմի գագաթն, որ հիւսիսայնոյն հաւասար է, 13436', և երկուքին միջոց կայ խոր և լայն պատառուածք մը, ուր կը դիզուին ձիւն և սառն՝ որ բուն գագաթանց վրայ քիչ կը մնան։ Այս Գարա-կէօլի մօտերն ալ կային Քուրդ հովիւք, վասն զի արօտ ալ գտուէր հանդերձ քանի մը լեռնային ծաղկօք, և մինչև յ'12000' բարձրութեան հալած ձեանց մէջ գեղեցիկ փիփիդէսք (Primula farinosa) և առատ ագառիծաղիկք (Carex)։

Ռատտէ մինչև 'ի 12300' բարձրութեան հասնելով՝ տկարութեան և տենդի պատճառաւ չկրցաւ առաջ երթալ, այլ ձեան դաշտի մէջ չոր տեղ մը գտնելով՝ հանգչեցաւ, և կը դիտէր իր ուղեկիցը Պ. Սիվերս, որ կ'ելնէր Արագածու հարաւային-արևելեան սնարը. և երկու ժամէ դարձաւ, ոչ միայն յոգնած այլ և հիւանդ. բայց Արագածու գագաթան գեղեցիկ պատկեր մը գծագրեր էր։ Փութացան երկուքն ալ վար իջնել և հանգչելու տեղ մը գտնել. եկան յՕղուզլար, և շատ դժուարութեամբ հազիւ կտաւէ վրան մը գտան գիշերը անցընելու, թէ և անքուն և ջերմով տագնապած։ Երկրորդ առաւօտուն (29 յուլ.) եկան 'ի Քեաթակլու, Շահառովիչ Դաւթի տունը, և հոն հանգչեցան երեք օր։ Օգոստոսի առջի օրը դարձան 'ի Փիրօքեան, և անկէ ուզեցին երթալ յԷջմիածին։

Առաջին հանդիպած տեղն եղաւ Ագարակ, թաթարաբնակ գիւղն, ուր կը սկսի բամբակի և կնջըթի մշակութիւն. հին եկեղեցւոյն մէջ դիտեցին կարմիր աւազաքարի վրայ անարուեստ քանդակեալ ձիանք, եր-

digitised by A.R.A.R.@

քեմի ինչուան բնական մեծութեամբ։ Զը մշակուած տեղերու բուսաբերութիւնն շատ նուազ էր, պատճառաւ տաքութեան և ջրի պակասութեան. Անբերդու գետակն իսկ գրեթէ ցամքած էր, ինչպէս նաև շատ ջրանցք, որոնք կրնային լաւ ոռոգել Էջմիածնի դաշտը։ Բամբակի արտերը դիտելով՝ որ տեղ տեղ հազիւ ինչուան 7 և 5 մատնաչափ բարձրացած՝ ծաղկեր էին, և հազիւ 1 1/2 ոտք բարձրութեամբ բամբակենի գտուեր, այսպէս ալ սրոհունգի տունկն (Ricinus) 2 ոտնաչափ բարձրութեամբ կը ծաղկէր, և հազիւ չորս ոտնաչափի կը հասնէր։ Ասոր պատճառ կարծէ շատ խիտ սերմանելն ու քիչ ջրելը, բայց նաև սերմին տեսակն. անոր համար քանի մը տարիէ վեր սկսան Ամերիկայէ առնուլ բամբակի հունտը։

Նոյն օրը եկան յԷջմիածին, զոր Հայկական Հռոմ կոչէ, այլ կարևոր տեղեկութիւն մը չի տար Ռատտէ տեղւոյն վրայ, քիչ մը տժգոհալով՝ 'ի սկզբան լաւ կամ շուտ ընդունելութիւն չգտնելուն, թէ և 'ի Սևան Կաթողիկոսէն յանձնարար գիր առեր և բերեր էր. գրատունն ալ գոց գտեր է. կը յիշէ սեղանատունը քարեղէն սեղանօք, և այն երեկոյեան ամենէն նշանաւոր կամ հետաքննելի բանը՝ Եթովպացի ուխտաւորի մը հօն գտուիլը։ Գովութեամբ կը յիշէ վանաց հարաւակողմն եղած մեծ քարայատակ աւազանը և ծառատունկը, երկուքն ալ արդիւնք Ներսէսի Ե կաթողիկոսի, որուն հետևող ըլլալ փափագի յաջորդացն։ Եւ ուրիշ շատերու նման՝ անտանելի կ'ըսէ տեղւոյն ամառնային բնակութիւնը՝ պատճառաւ տօթոյն և մոծակաց։ Գիշերն յԷջմիածին անցընելով, հետևեալ օրն (2 օգոստ.) ճամբանին կ'ուղղեն դէպ յարևմուտս, ուր Երասխայ դաշտն չէ թէ միայն բազմաթիւ ագուգայիւք ջրոց ոռոգեալ էր, այլ և տեղ տեղ ջրշեղջներ կամ ճահիճներ ունի, ուր կը յաճախեն ջրային հաւք. (յորոց յիշէ Ibis, Himantopus, Phalacrocorax, որք յիշեցընեն մեզի Ղազարայ Փարպեցւոյ անուանած ջրահաւերը, Աքար, Փոր, Թանձր, Սագ, և այլն)։ Ջրոց առատութեամբ երկիրն ալ ոչ միայն լաւ մշակուած է, այլ և ուրիշ կողմերու համեմատութեամբ բազմամարդ։ Բայց քիչ մը հեռանալով դէպ 'ի բլուրները՝ անապատ մը ներկայանայ, անապատաց աղի բոյսերու նման բոյսերով, որով կրնան ալքալի (փոթաս) շինել, և սապոնի պատրաստութեան գործածել։

Սարտարապատ աւանին մէջ քիչ մը հանգչելէն ետև՝ կէսօրէն վերջը դէպ 'ի արևմտեան հարաւ երթալով եկան ուղևորք 'ի Ղահրիար գիւղ, ուր կը բնակէր այն կողմերը հռչակեալ երկրատէր մը Յովհան Սուլդան անուանեալ, որոյ քով ոչ միայն հիւրասիրութեամբ ընդունելութիւն գտանք, կ'ըսէ ճամբորդն, այլ և եւրոպական մաքրութիւն, կարգաւորութիւն և վայելչութիւն։ Երկրորդ առաւօտուն (4 օգոստ.) Ղահրիարէն քանի մը մղոն հեռու դէպ 'ի հիւսիսային արևելք հին Արմաւրայ աւերակաց քով Յովհան Սուլդանին տնկած անտառը ուզեցին տեսնել, և գտան ուռենիներ և կաղնիներ, քիչ մ' ալ կնձնի, բայց ոչ գիտնական կանոնով տնկած։ Ռատտէ խորհուրդ տուաւ իր ասպնջականին՝ հարաւային Ռուսաստանի ծառերէ ալ տնկել, որք կրնան յաջողիլ հօս ջրի առատութեամբ և բուսական շուք գտնելով։ Ճամբանին յարևմուտս դարձընելով և անցնելով Գարագալէի աւերակաց քովէն, եկան 'ի Սուրմառի և անցան Երասխ գետը դէպ 'ի հարաւ, ուսկից տեսան յարևմուտս Թաքեալդու (Բարդող) լեռը, 7000' բարձր։ Գետինն անհարթ էր, լերկ, քարուտ և գաճուտ. և շատ տեղ ջրի ողողմանց նշաններ կ'երևէին։ — Հասան 'ի Կողբ, որոյ բնակչաց գլխաւոր աշխատանքն է մօտակայ աղահանքը բանիլ, թէ և քիչ մը մշակութիւն ալ կ'ընեն, և պարտէզնին վայելուչ կ'երևար։

Ռատտէ ստիպուելով հօս ակամայ ուշանալ՝ կը հանդիպի մահմետական Թաթար չիկամօրուս թոփչի մը, և այն կողմանց օձերու վրայօք տեղեկութիւն կ'առնու. Թոփչին ծոցէն և գրպանէն քանի մը կէս թմրած իժեր կը հանէ. և քանի մ'օրէն վերջը նոր բռնած ժիր իժեր ալ կը բերէ. Թոփչիք այս օձից մէջքէն վար ուժով մը սղմելով՝ անկարող կ'ընեն զանոնք աղէկ մը գալարելու։ — Օգոստոսի 8ին նորէն ճամբայ ելան, Թաքեալդու լերին արևելեան և հարաւային ստորոտէն անցնելով. տեսան դարւոյ արտեր ինչուան 5-6000' բարձրութեան, տեղտեղ ալ վարսակ. լերան հարաւակողմը աղբիւրի մը քով հանգչելով՝ դէպ յարևմտեան հարաւ կը դիտէին Սինա կոչուած լեռները, որոց մէջ բարձրագոյնն Բարլու՝ իր հիւսիսակողմը ձիւնապատ կը ցուցընէր։ Այս բարձրաւանդակ երկիրս դեռ շատ ծանօթ չէ աշխարհագրաց. Քըրդաց արօտատեղի է, որոց վրաններն սփռուած են գեղեցիկ լեռնային բուսոց մէջ, ինչպէս են տերեփուկք (Centaurea), և պէսպէս գառնադմակիկ. (Sempervivum, Sedum) սալփիա և թուփք մկնամըրգի (Astragalus) և փշածաղիկ։ Այս բոյսերէն աւելի առատ և

digitised by A.R.A.R.@

բուն ստորալպեան ըսուածներն երևցան աւելի ցած տեղուանք Գաւաշ-տաղ լերան արևմտակողմը՝ 'ի հովտի Գաշը-գօփարան կոչուած վտակի (որ Թափի 'ի Փառնասուռ գետակ և սա յԵրասխ)։ Ռուսք այս տեղուանքս սուրհանդականաց մը հաստատած են և քանի մը խազախ պահապան դրած՝ Քրդաց հանդրուանի մը մէջ, որ յանուն վտակին կոչի՝ Գաշը-գօփարան. ամառուան տաքէն փախչելով հօս եկեր էր այս ատենս՝ Էջմիածնի միճակին դատաւորն։ Այս կողմերուս լեռնային բուսաբերութիւնն՝ Ռատտէ իր տեսածներուն ամենէն առատ և գեղեցիկներէն մէկն է, կ'ըսէ, նոյնպէս հարուստ միջատներով և երէօք. բայց ինքն շատ չուշանալով օգոստոսի 11ին անցաւ Փառնասուռ գետակը, և մտաւ 'ի հովիտ Թանտուրակայ (Թոնդրակ?)։

Այս հովիտս կամ դաշտս ընդարձակ և բարձր է, իբր 6400' յերեսաց ծովու, և շատ առուակներով ոռոգուած՝ նման Եփրատայ և Կուրի ազբերավայրաց, շատ պարարտ և բարեբեր. կը բերէ լաւ գարի, նաև ցորեն. ունի և աղէկ որսի Թռչուններ։ Դաշտին արևմտեան եզերքը կ'ամբառնան Խօշխօշք կոչուած լերինք, որոց վրայ ելան ուղևորքն, և անկէ դիտեցին Տօղուլ կոչուած լերան ստորոտը սփռած Քրդաց վրանները, որք քառակուսի են և չորս կողմէն ալ բացուածք ունին. չիթ կտաւէ և բրդով հիւսուած վարագոյրներն կամ պատերն վայելուչ կերպով զուգահեռական դրիւք ձողերով այնպէս կապուած են՝ որ օդն կարենայ զովացընել ներսը, բայց անձրև չմտնէ. գունագոյն ալ ըլլալով գեղեցիկ տեսք մը կ'ընծայեն. և ամեն մէկ վրանի վարագոյրք 100 և ինչուան 150 րուբլ կ'արժեն։ Տօղուլ լերան արևելեան բոլորակ գագաթան տակ, յ' 7850' բարձրութեան, Քրդաց գլխաւորն Ճեաֆար աղա իր վրանը կանգնած էր, և շատ մարդասիրութեամբ ընդունեցաւ ու պատուեց ուղևորները։

Օգոստոսի 12ին անցան ուղևորք յՕսմանեան սահման, Աչըգ-տէպէ կոչուած բարձր լերանց մէկէն՝ որ Քէօր-տաղ կ'ըսուի, 8322', և առաջին անգամ տեսան Եփրատայ (Արածանւոյ) ազբերականց ընդարձակ հովիտները, և անոնց հարաւային հորիզոնին բարձր և ձիւնագագաթ Ալատաղ լեռները (իբր 13000')։ Այս կողմերս կը գտնուին առինք (վայրենի ոչխար) և պէզոար ունող այծեմունք, որոնցմէ քանի մը հատ բռներ էին Թուրքք։ Լերանց 9500' բարձրութեան սահմանին ալպեան բուսաբերութիւն գտան, ինչպէս Թուրքկոտեմ, խառածաղիկ (Ranunculus, Potentilla) և այլն. ինչուան 10196' բարձրութեան ելնելով, հասան լերան առաջին քարաժայռին, որ հիւսիսակողմը ինչուան 12000' կը բարձրանայ։ Կը լսէին լեռնային կաքնկաց կչալը, և կը տեսնային օդուն մէջ գառնակեր անգեղայ Թռիչը[1]. ժայռերուն մէջ կը ծաղկէին կանթեղնիճք (Campanula), և ուր որ քիչ մ'աւելի հող կար՝ հառոմ-երնջան կամ օձիսխոտն (Gentiana), փլոմիգէս, խառածաղիկ, քարհերձուկ (Saxifraga), և եղինճի տեսակք (Lamium tomentosum)։ Առաջնորդ չունենալով չհամարձակեցան Աչըգ-տէպէ լերան գագաթը ելնել փորձելու, որ արևելեան և արևմտեան կողմէն՝ անկարելի է, շատ սեպ ըլլալով, այլ արևելեան հիւսիսային միջոցէն միայն յարմար։ Այն գիշերը անցուցին Աք-չայ գետակին եզերքը, և երկրորդ առաւօտուն (13 օգոստ.) դարձան առ Ճեաֆար աղա, յորմէ հրաժարելով սկսան դէպ 'ի հարաւ երթալ յազբերակունս Եփրատայ և 'ի լիճն Պալըգլը։

Այս կողմի Երասխայ և Եփրատայ ջըրբաժին լեռներն, ինչպէս նաև Երասխայ ուրիշ կողմը, և Կուրի ջրբաժինք՝ ամենքն ալ նման են, ըստ Ռատտէի, տափակք, ալէձևք և ոչ սրագաթն և հերձոտեալ. ամառ ատեն միայն տեղ տեղ ձիւն կ'երևի այս լերանց վրայ և ոչ շարունակ ձեան գօտի մը, որով յայտ է թէ 12000' բարձր չեն ասոնք. լերանց լայն քամակներն և կողերն առատ աղբիւրներ կը բղխեն, և տեղ տեղ այնչափ քիչ ծռած են՝ որ ջրշեղջներ կամ ճահիճներ կը ձևանան. ինչուան 7000' ալ բանջարեղէնք կը բուսնին։ Այս Եփրատայ բարձր ազբերականց մէկն է Ախգա, որոյ եզերքը կայ համանուն գիւղակ մը Քրդաց, և գլխաւորն էր Ճեաֆար աղայի անդրանիկ որդին, որ և ընդունեցաւ ուղևորները այն գիշեր։ Երկրորդ առաւօտուն (14 օգոստ.) Սինէկ կամ Սինա լերանց հարաւային արևելեան ստորոտքը պատելով, Եզիտներու բնակած գեղերուքովէն անցան, որք այս ատեն ամայի մնացեր էին, վասն զի բնակիչքն իրենց հօտերով լերանց բարձր արօտներու գնացեր էին։ Քուրդպուղա կոչուած դաշտէն անդին անցան այն լերանց գօտին՝ որ Օսմանեանց և Ռուսաց սահմանը կը կտրեն, և մտան ձկնաշատ լճին պարահովիտը, որ ամեն կողմէ լերկ լեռներով պատած է, և իբր 7600'

1 Գիշակեր հաւուց ամենէն մեծ տեսակն է որ գտնուի և յԱլպեայս Եւրոպիոյ։

digitised by A.R.A.R.@

բարձր է ծովուն երեսէն. աստ հարաւային կողմը պատելով յարևելեանն եկան, ուր Թերակղզւոյ նման տեղ մը հին աւերակ բերդի մը քով բնակութիւն հաստատած էր Ռուս Մալոքան աղանդաւոր մը՝ Տարաչիչակէ եկած, և 'ի Թուրքաց վարձեր էր ձկանց որսը, յԵրևանէ և 'ի Կողբայ սայլերով բերելով նաւակը և ուռկանները. և շատ ատեններէ վեր՝ առաջին ձկնորսն էր այս լճին։

Սա ինքն ձկնորսն ընկեր և առաջնորդ եղաւ մեր ուղևորաց՝ Հայոց անուանի Ս. Յովհաննէս վանքը երթալու, այն է Խուչգիլիսէ կոչուածն ('ի Բագրևանդ). օգոստոսի 15ին ճամբայ ելան հրաբղխային խճաքարանց վրայէ անցնելով, որք և լճին մէջ կ'երևային քանի մը կանգուն տարածութեամբ՝ ինչուան որ աւազն սկսէր. լճին հարաւակողմն շատ լայն է քան զհիւսիսայինը, և աւելի յարմար ձկնորսութեան. այս կողմէն Մուզիք լերան հիւսիսային ստորոտից մօտէն՝ նեղ ձորակէ մը ջուր կ'արձըկէ լիճն, (որ կոչի Պալըգսու-չայ) և խառնելով 'ի Սարը-սու և յԱգ-չայ՝ կը Թափի յԵրասխ. ձորեզերաց քարերն հրաբղխի են։ Լճին արևմտեան կողմը կ'ամբառնայ Գզըլ-տաղ՝ որ Քրդաց ուխտատեղի է, (անոր համար կ'ըսուի և Գզըլ-զիարէդ.) հարաւային կողմն է յիշեալ Մուզիք լեռն, որոյ լայն քամակն ուսկից կ'անցնուի՝ Թուի իբր 8600′ բարձր. աստ հարաւային ստորոտքն աւելի դիւր կ'իջնան յԵփրատայ հովիտը, քան հիւսիսայինքն 'ի հովիտ Պալըքըլը լճին։

Օրհասարակէն ետև հասան ուղևորքն 'ի վանս Ս. Յովհաննու, ուր հանդիպեցան 54 Հայ ուխտաւորաց, որք կը դառնային 'ի Վան, իրիկունը հօն ընթրելէն ետև։ Վանաց պարտիզին ուռենեաց վրայ բոյն դրած արագիլներն նշանաւոր բան մ'երևցան ուղևորին. որ և նոյն պարտիզին բերքերէն կերած վարունգը և խաւարտը յիշէ, և Թէ կաղամբն դեռ նոր գլուխ կապեր էր։ Յետ ընթրեաց և յետ լռելու ուխտաւորաց երգերուն և պարերուն, կէս գիշերուընէ առաջ մինչ ամէնքն 'ի քուն մտած էին, վանքին դուռն ուժով ուժով զարնուեցաւ. ճերմակ ձիու վրայ հեծած և ոտքէն մինչև 'ի գլուխ զինուած արաբացի մի ներս մտաւ, և մեր ուղևորայ վախ պատճառեց՝ անցագիր չունենալուն համար. ուստի երկրորդ առաւօտուն (16 օգոս.) կանուխ՝ մինչ դեռ Արաբացին կը հանգչէր՝ ելան, և դարձան դէպ 'ի Պալըգ-կէօլ, որուն հիւսիսային արևելեան կողմի Ագաս-կէօլ լեռնանցքէն անցնելով մտան նորէն 'ի Ռուսաց հող. և դէպ 'ի հիւսիս երթալով՝ եկան 'ի մեծ գեօղն Իղտիր, (Կողբայ արևելակողմը). Թէ՛ այս գեղիս և Թէ՛ իր մերձաւորաց սահմաններն շատ աղէկ մշակուած են՝ ջրանցից առատութեամբ։ Իղտիրէն դէպ 'ի Մասիս ուղղելով ճամբանին մեր ուղևորքն՝ եկան յԱրկաճի գիւղ, յարևմտեան հիւսիսային ստորոտս այն մեծ լերան, որ լաւայից վրայ կանգնած է. և պայծառ օր մ'ըլլալով (18 օգոստ.) սքանչելի տեսարան մը կը տարածուէր ամեն կողմ. յարևմուտս մինչև 'ի լերինս Ղարսի կ'ենէին, յարևելս մինչև Նախիջևանի լերինս. արևմուտքէն դէպ յարևելս ձգեալ պար մը լերանց յԱրագածայ մինչև 'ի բարձրաւանդակն Սևանայ ծովուն. հարաւէն՝ հսկայակերպն Մասիս, որոյ 14000′ բարձր սառամանեաց գօտին՝ նաև արևուն մտնելէն շատ ետքը՝ անոր կարմրութեամբը կը փայլէր։ Ռատտէ իր ընկերովն գիշերն անցուց յԱրկաճի, ուր ուրիշ ընկերներ և առաջնորդներ ալ եկան, և պատրաստութիւն տեսան ելնելու 'ի Մասիս՝ յարևմտեան կողմէն, և երթալու նախ 'ի Կէօտիւք ըսուած տեղը, ուր Ռուսաց բաժնի Քրդաց խումբ մը պիտի գտնուէր, և ընդարձակ լեռնատափ մ'է։ Լերան արևմտեան հրուանդաններէն դէպ 'ի հարաւ դառնալով՝ յերևան կու գայ սև լաւայէ ցամաք ծով մը, որ մեծ Մասեաց Գուրղուն ըսուած դարատափէն սկսեալ մինչև յԵրասխայ դաշտը կը տարածուի։

digitised by A.R.A.R.@